

84

**ՕԴՈՐԱԿԻՉՆԵՐԻ ՎՐԱ ԿԱՏԱՐՎՈՂ ՆՈՐՈԳՄԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՐՋԷԿ-ԳՀԾՁԲ 67/18**

ք. Երևան

«24» 04 2018թ.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ս. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ԱՁ Մեսրոպ Վիգենի Աղազարյանը (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է օդորակիչների վրա կատարվող նորոգման, տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 8896950 (ութ միլիոն ութ հարյուր ինսունվեց հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (գրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:



5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՎԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության ՀՀ դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է ՀՀ կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության



մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:


7.11 Սույն պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ
Հասցեն՝ ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ., N3
հ/հ 2473600002170010
«Արդշինբանկ» ՓԲԸ-ի Շենգավիթ մ/6
ՀՎՀՀ 02205028
Գլխավոր տնօրեն՝ Ս. Խաչատրյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ԱՁ Մ. Աղազարյան»
Հասցեն՝ Արարատի մարզ,
գ. Սուրենավան, Արցախի 15 տուն
հ/հ 205282206973
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 84487224
Մ. Աղազարյան



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Ն դրամ

Ծառայության							մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Ոսկիումի միավորի քանակը	Գումարը / ընդհանուր գինը / ՀՀ դրամ	Սիրողի մատուցման ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**	
1	71311380	օդորակիչների վրա կատարվող նորոգման, տեխնիկական սպասարկման ծառայություններ Ծառայությունների ծավալները բերված է սույն հավելվածին կից հավելված թիվ 1.1	դրամ	8896950	1	Ք. Երևան Արին Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3	01.08.2018թ-ից մինչև 31.07.2019թ-ը	
Այլ պայմաններ								
Մատուցված ծառայությունների երաշխիքային ժամկետը մեկ տարի								

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ


«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ
 Հասցեն՝ ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ., N3
 հ/հ 2473600002170010
 «Արդշինբանկ» ՓԲԸ-ի Շենգավիթ մ/6
 ՀՎՀՀ 02205028
 Գլխավոր տնօրեն՝ Ս. Խաչատրյան

ԿԱՏԱՐՈՂ

«ԱԶ Մ. Աղազարյան»
 Հասցեն՝ Արարատի մարզ,
 գ. Սուրենավան, Արցախի 15 տուն
 հ/հ 205282206973
 «Ինտելոբանկ» ՓԲԸ
 ՀՎՀՀ 84487224
 Մ. Աղազարյան



/ստորագրություն/
 Կ.Տ



/ստորագրություն/

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով 2018թ. օդորակիչների վրա կատարվող նորոգման, տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնման ներկայացված թվով **1չափաբաժնով**

Ձ/Բ	Ծառայության անվանումը	Տեխնիկական բնութագիր	Չափման միավոր	Օդարակիչների քանակ	Միավոր գին ՀՀ դրամ	Ընդհանուր գին ՀՀ դրամ առանց ԱԱՀ
1		«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի օդորակիչների սպասարկման ծառայություններ				
1	1. Կոնդենսատորի լվացում 2. Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում 3. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:	Օդորակիչի մոդելը՝ KB – AHN276, Ցրտարտադրողականություն – 97 ԿՎտ, Ջերմարտադրողականություն – 149 ԿՎտ, Ջեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը – R22 Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	հատ	1	110000 134000	20000
2	1. Կոնդենսատորի լվացում 2. Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում 3. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:	Օդորակիչի մոդելը՝ KB – AHN112, Ցրտարտադրողականություն – 33 ԿՎտ, Ջերմարտադրողականություն – 56 ԿՎտ, Ջեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը – R22 Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	հատ	1	33000 56000	15000
3	1. Կոնդենսատորի լվացում 2. Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում 3. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:	Օդորակիչի մոդելը՝ SVE 100R, Ցրտարտադրողականություն – 21,3ԿՎտ, Ֆրեոնի մակնիշը – R407C, Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	հատ	4	85200 110400	60000
4	1. Կոնդենսատորի լվացում 2. Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում 3. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:	Օդորակիչի մոդելը՝ SVU 150R, Ցրտարտադրողականություն – 33,3 ԿՎտ, Ջերմարտադրողականություն – 10ԿՎտ, Ջեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը – R407C Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	հատ	4	133200 236400	15000
5	1. Կոնդենսատորի լվացում 2. Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում 3. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:	Օդորակիչի մոդելը՝ SVE 30P, Ցրտարտադրողականություն – 6,4 ԿՎտ, Ջերմարտադրողականություն – 3 ԿՎտ, Ջեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը – R407C Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	հատ	1	12800 19850	10000
6	1. Կոնդենսատորի լվացում 2. Գոլորշացուցիչի և ներքին	Օդորակիչի մոդելը՝ SVE 50M, Ցրտարտադրողականություն –	հատ	2	29200 46800	



	բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում 3. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:	7,34վտ, Ջերմարտադրողականություն – 11,54վտ, Ջեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը – R407C Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա			20000
7	1.Կոնդենսատորի լվացում 2.Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում 3. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:	Օդորակիչի մոդելը՝ SVE 100R, Ցրտարտադրողականություն – 21,34վտ, Ֆրեոնի մակնիշը – R407C, Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	հատ	2	44600 80200 30000
8	1.Կոնդենսատորի լվացում 2.Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում 3. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:	Օդորակիչի մոդելը՝ SVR 80R, Ցրտարտադրողականություն – 12,54վտ, Ջերմարտադրողականություն – 16,54վտ, Ջեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը – R407C Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	հատ	1	25000 32500 10000
9	1.Կոնդենսատորի լվացում 2.Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում 3. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:	Օդորակիչի մոդելը՝ SVR 80R, Ցրտարտադրողականություն – 12 Կվտ, Ջերմարտադրողականություն – 12,3 Կվտ, Ջեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը – R407C Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	հատ	1	24000 37000 10000
10	1.Կոնդենսատորի լվացում 2.Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում 3. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:	Օդորակիչի մոդելը՝ SVE 20P, Ցրտարտադրողականություն – 4,2 Կվտ, Ջերմարտադրողականություն – 2,4 Կվտ, Ջեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը – R407C Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	հատ	1	8400 12600 5000
11	1.Կոնդենսատորի լվացում 2.Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում 3. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:	Օդորակիչի մոդելը՝ SVE 20P, Ցրտարտադրողականություն – 2 Կվտ, Ջերմարտադրողականություն – 4,4 Կվտ, Ջեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը – R407C Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	հատ	3	12000 23000 15000
12	1.Կոնդենսատորի լվացում 2.Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում	Օդորակիչի մոդելը՝ PAS120L, Ցրտարտադրողականություն – 28,8 Կվտ, Ջերմարտադրողականություն – 9,7 Կվտ, Ջեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը – R22 Արտադրող՝ TEMPSTAR ICP, ԱՄՆ	հատ	2	57600 95200
13	1.Կոնդենսատորի լվացում 2.Գոլորշացուցիչի և ներքին	Օդորակիչի մոդելը՝ PAF048L, Ցրտարտադրողականություն – 10,4	հատ	4	83200 104800

11/02/2011

	բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում	ԿՎտ, Ջերմարտադրողականություն - 6,6 ԿՎտ, Ջեռուցման եղանակ - Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R22 Արտադրող՝ TEMPSTAR ICP, ԱՄՆ			
14	1. Կոնդենսատորի լվացում 2. Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում 3. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:	Օդորակիչի մոդելը՝ C12L4U, Ցրտարտադրողականություն - 3,52 ԿՎտ, Ջերմարտադրողականություն - 3,87 ԿՎտ, Ջեռուցման եղանակ - Ջերմային պոմպ, Ֆրեոնի մակնիշը - R22 Արտադրող՝ LG	հատ	1	7040 10560 5000
15	1. Կոնդենսատորի լվացում 2. Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում 3. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:	Օդորակիչի մոդելը՝ W05LC, Ցրտարտադրողականություն - 1,5 ԿՎտ, Ֆրեոնի մակնիշը - R22, Արտադրող՝ LG	հատ	1	3000 4500 5000
16	1. Կոնդենսատորի լվացում 2. Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում 3. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:	Օդորակիչի մոդելը՝ S 24A W U 52, Ցրտարտադրողականություն - 7,03 ԿՎտ, Ջերմարտադրողականություն - 8 ԿՎտ, Ջեռուցման եղանակ - Ջերմային պոմպ, Ֆրեոնի մակնիշը - R-410A Արտադրող՝ LG	հատ	2	28120 42180 20000
17	1. Կոնդենսատորի լվացում 2. Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում 3. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:	Օդորակիչի մոդելը՝ CU-PA12GKD, Ցրտարտադրողականություն - 3,6 ԿՎտ, Ջերմարտադրողականություն - 4 ԿՎտ, Ջեռուցման եղանակ - Ջերմային պոմպ, Ֆրեոնի մակնիշը - R-22 Արտադրող՝ PANASONIC	հատ	1	7200 10800 5000
18	1. Կոնդենսատորի լվացում 2. Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում 3. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:	Օդորակիչի մոդելը՝ WFA48PF8MC, Ցրտարտադրողականություն - 14,1 ԿՎտ, Ջերմարտադրողականություն - 15,2+3,5 ԿՎտ, Ջեռուցման եղանակ - Ջերմային պոմպ-էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R-22 Արտադրող՝ White-Wesinghouse	հատ	4	112800 129200 40000
II		«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի վարչական շենքի օդի օդորակիչների սպասարկման ծառայություններ			
1	Տեխնիկական սպասարկում	Օդորակիչ SPW-24, արտադրման տարետիվը 2000թ	հատ	1	24000
2	Տեխնիկական սպասարկում	Օդորակիչ Սատուրն, արտադրման տարետիվը 2004թ	հատ	2	48000
3	Տեխնիկական սպասարկում	Օդորակիչ ARG-60, արտադրման տարետիվը 2005թ	հատ	2	12000
4	Տեխնիկական սպասարկում	Օդորակիչ 12000 BTI, արտադրման տարետիվը 2005թ	հատ	3	36000
5	Տեխնիկական սպասարկում	Օդորակիչ 3 KBT, արտադրման տարետիվը 2009թ	հատ	3	6000
6	Տեխնիկական սպասարկում	Օդորակիչ 24000 KBT, արտադրման տարետիվը 2009թ	հատ	4	24000

7	Տեխնիկական սպասարկում	Օդորակիչ Electrolux, արտադրման տարետիվը 2010թ	հատ	3	60000
8	Տեխնիկական սպասարկում	Օդորակիչ Acson, արտադրման տարետիվը 2010թ	հատ	1	30000
III		«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թ1 Էներաբլոկի օդորակիչների ընթացիկ նորոգման աշխատանքներ			
1	1, Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում 2. Սառնարային ագենտի լիցքավորում: 3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում: 4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում 5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:	Օդորակիչի մոդելը՝ KB – AHN276, Ցրտարտադրողականություն – 97 ԿՎտ, Ջերմարտադրողականություն – 149 ԿՎտ, Ջեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը – R22 Արտադրող՝ Kiturami Bummyang Air Conditioning Co. LTD, Կորեա	հատ	1	3000
					388000
					30000
					15000
					45000
2	1, Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում 2. Սառնարային ագենտի լիցքավորում: 3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում: 4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում 5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:	Օդորակիչի մոդելը՝ KB – AHN112, Ցրտարտադրողականություն – 33 ԿՎտ, Ջերմարտադրողականություն – 56 ԿՎտ, Ջեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը – R22 Արտադրող՝ Kiturami Bummyang Air Conditioning Co. LTD, Կորեա	հատ	1	3000
					132000
					20000
					15000
					30000
3	1, Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում 2. Սառնարային ագենտի լիցքավորում: 3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում: 4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում 5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:	Օդորակիչի մոդելը՝ SVE 100R, Ցրտարտադրողականություն – 21,3ԿՎտ, Ֆրեոնի մակնիշը – R407C, Արտադրող՝ Kiturami Bummyang Air Conditioning Co. LTD, Կորեա	հատ	4	12000
					511200
					80000
					60000
					12000
4	1, Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում 2. Սառնարային ագենտի	Օդորակիչի մոդելը՝ SVU 150R, Ցրտարտադրողականություն – 33,3 ԿՎտ, Ջերմարտադրողականություն – 10 ԿՎտ, Ջեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը –	հատ	4	12000
					909200

15551 Ը. Պ. 125511

	<p>լիցքավորում: 3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում: 4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում 5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:</p>	R407C Արտադրող՝ Kiturami Buming Air Conditioning Co. LTD, Կորեա			160000	
					60000	
					120000	
5	<p>1, Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում 2. Սառնարային ագենտի լիցքավորում: 3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում: 4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում 5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:</p>	<p>Օդորակիչի մոդելը՝ SVE 30P, Ցրտարտադրողականություն – 6,4 ԿՎտ, Ջերմարտադրողականություն – 3 ԿՎտ, Ջեռուցման եղանակ – էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R407C Արտադրող՝ Kiturami Buming Air Conditioning Co. LTD, Կորեա</p>	հատ	1	3000	
					38400	
					15000	
					10000	
					25000	
6	<p>1, Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում 2. Սառնարային ագենտի լիցքավորում: 3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում: 4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում 5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:</p>	<p>Օդորակիչի մոդելը՝ SVE 50M, Ցրտարտադրողականություն – 7,3 ԿՎտ, Ջերմարտադրողականություն – 11,5 ԿՎտ, Ջեռուցման եղանակ – էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R407C Արտադրող՝ Kiturami Buming Air Conditioning Co. LTD, Կորեա</p>	հատ	2	6000	
					87600	
					30000	
					20000	
					50000	
7	<p>1, Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում 2. Սառնարային ագենտի լիցքավորում: 3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում: 4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում 5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:</p>	<p>Օդորակիչի մոդելը՝ SVE 100R, Ցրտարտադրողականություն – 22,3 ԿՎտ, Ֆրեոնի մակնիշը - R407C, Արտադրող՝ Kiturami Buming Air Conditioning Co. LTD, Կորեա</p>	հատ	2	6000	
					267600	
					40000	
					30000	
					60000	
8	<p>1, Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում 2. Սառնարային ագենտի</p>	<p>Օդորակիչի մոդելը՝ SVR 80R, Ցրտարտադրողականություն – 12,5 ԿՎտ, Ջերմարտադրողականություն – 16,5 ԿՎտ, Ջեռուցման եղանակ –</p>	հատ	1	3000	
					75000	

	<p>լիցքավորում: 3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում: 4, Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում 5, Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:</p>	<p>Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R407C Արտադրող՝ Kiturami Bummyang Air Conditioning Co. LTD, Կորեա</p>			20000	
					15000	
					25000	
9	<p>1, Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում 2. Սառնարային ագենտի լիցքավորում: 3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում: 4, Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում 5, Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:</p>	<p>Օդորակիչի մոդելը՝ SVR 80R, Ցրտարտադրողականություն - 12 ԿՎտ, Ջերմարտադրողականություն - 12,3 ԿՎտ, Ջեռուցման եղանակ - Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R407C Արտադրող՝ Kiturami Bummyang Air Conditioning Co. LTD, Կորեա</p>	հաս	1	3000	
					72000	
					20000	
					15000	
					25000	
10	<p>1, Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում 2. Սառնարային ագենտի լիցքավորում: 3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում: 4, Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում 5, Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:</p>	<p>Օդորակիչի մոդելը՝ SVE 20P, Ցրտարտադրողականություն - 4,2 ԿՎտ, Ջերմարտադրողականություն - 2,4 ԿՎտ, Ջեռուցման եղանակ - Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R407C Արտադրող՝ Kiturami Bummyang Air Conditioning Co. LTD, Կորեա</p>	հաս	1	3000	
					25200	
					15000	
					10000	
					25000	
11	<p>1, Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում 2. Սառնարային ագենտի լիցքավորում: 3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում: 4, Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում 5, Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:</p>	<p>Օդորակիչի մոդելը՝ SVE 20P, Ցրտարտադրողականություն - 2 ԿՎտ, Ջերմարտադրողականություն - 4,2 ԿՎտ, Ջեռուցման եղանակ - Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R407C Արտադրող՝ Kiturami Bummyang Air Conditioning Co. LTD, Կորեա</p>	հաս	3	9000	
					36000	
					45000	
					30000	
					60000	
12	<p>1, Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում 2. Սառնարային ագենտի լիցքավորում:</p>	<p>Օդորակիչի մոդելը՝ PAS120L, Ցրտարտադրողականություն - 28,8 ԿՎտ, Ջերմարտադրողականություն - 9,7 ԿՎտ, Ջեռուցման եղանակ - Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը -</p>	հաս	2	6000	
					230400	

11.04.2023

	<p>լիցքավորում: 3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում: 4, Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում 5, Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:</p>	R22 Արտադրող՝ TEMPSTAR ICP, ԱՄՆ			40000	
					15000	
					50000	
13	<p>1, Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում 2. Սառնարանային ագենտի լիցքավորում: 3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում: 4, Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում 5, Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:</p>	<p>Օդորակիչի մոդելը՝ PAF048L, Ցրտարտադրողականություն – 10,4 ԿՎտ, Ջերմարտադրողականություն – 6,6 ԿՎտ, Ջեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R22 Արտադրող՝ TEMPSTAR ICP, ԱՄՆ</p>	հատ	4	12000	
					158000	
					80000	
					10000	
					100000	
14	<p>1, Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում 2. Սառնարանային ագենտի լիցքավորում: 3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում: 4, Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում 5, Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:</p>	<p>Օդորակիչի մոդելը՝ C12L4U, Ցրտարտադրողականություն – 3,52 ԿՎտ, Ջերմարտադրողականություն – 3,87 ԿՎտ, Ջեռուցման եղանակ – Ջերմային պոմպ, Ֆրեոնի մակնիշը - R22 Արտադրող՝ LG</p>	հատ	1	3000	
					15000	
					15000	
					10000	
					20000	
15	<p>1, Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում 2. Սառնարանային ագենտի լիցքավորում: 3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում: 4, Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում 5, Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:</p>	<p>Օդորակիչի մոդելը՝ W05LC, Ցրտարտադրողականություն – 1,5 ԿՎտ, Ֆրեոնի մակնիշը – R22, Արտադրող՝ LG</p>	հատ	1	3000	
					8000	
					20000	
					10000	
					25000	
16	<p>1, Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում 2. Սառնարանային ագենտի</p>	<p>Օդորակիչի մոդելը՝ S 24AW U 52, Ցրտարտադրողականություն – 7,03 ԿՎտ, Ջերմարտադրողականություն – 8 ԿՎտ, Ջեռուցման եղանակ – Ջերմային պոմպ, Ֆրեոնի մակնիշը -</p>	հատ	2	6000	
					64000	

The ...

	<p>լիցքավորում: 3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում: 4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում 5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:</p>	R-410A Արտադրող՝ LG			30000	
					10000	
					40000	
17	<p>1,Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում 2. Սառնարային ագենտի լիցքավորում: 3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում: 4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում 5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:</p>	<p>Օդորակիչի մոդելը՝ CU-PA12GKD, Ֆրտարտադրողականություն – 3,6 ԿՎտ, Ջերմարտադրողականություն – 4 ԿՎտ, Ջեռուցման եղանակ – Ջերմային պոմպ, Ֆրեոնի մակնիշը - R-22 Արտադրող՝ PANASONIC</p>	հատ	1	3000	
					14400	
					15000	
					10000	
					25000	
18	<p>1,Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում 2. Սառնարային ագենտի լիցքավորում: 3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում: 4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում 5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:</p>	<p>Օդորակիչի մոդելը՝ WFA48PF 8MC, Ֆրտարտադրողականություն – 14,1 ԿՎտ, Ջերմարտադրողականություն –15,2-3,5 ԿՎտ, Ջեռուցման եղանակ – Ջերմային պոմպ և էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R-22 Արտադրող՝ White-Wesinghouse</p>	հատ	4	12000	
					225600	
					100000	
					60000	
					120000	
IV		<p>«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թ1 էներաբլոկի օդորակիչների հիմնական նորոգմաների ծառայություններ</p>				
1	Վիբրամարիչի փոխարինում (вибросаситель) 1''	Օդորակիչի մոդելը՝ SVE 100R Կոմպրեսորին միացված պղնձյա խողովակի տրամագիծը՝ Ներծծման գիծ- 25,4մմ (1''); Մղման գիծ- 15,9մմ (5/8'')	հատ	4	60000	
2	Վիբրամարիչի (вибросаситель) 5/8'' փոխարինում		հատ	3	30000	
3	Օ-ձև խամուտ հենարանով 5/8'' փոխարինում		հատ	4	4000	
4	Ցածր ճնշման մանոմետրի փոխարինում		հատ	4	40000	
5	Բարձր ճնշման մանոմետրի փոխարինում		հատ	4	40000	
6	Ֆիլտր-չորացուցիչի փոխարինում		հատ	4	72000	

ՀՀ Կառավարության կողմից հաստատված

7	Վիբրամարիչի փոխարինում (вибромасителъ) 7/8''	Օդորակիչի մոդելը՝ SVU 150R Կոմպրեսորին միացված պղնձյա խողովակի տրամագիծը՝ Ներծծման գիծ- 22,2մմ (7/8''); Մղման գիծ- 15,9մմ (5/8'')	հատ	5	50000
8	Վիբրամարիչի (вибромасителъ) 5/8'' փոխարինում		հատ	5	50000
9	Օ-ձև խամուտ հենարանով 5/8'' փոխարինում		հատ	8	8000
10	Ցածր ճնշման մանոմետրի փոխարինում		հատ	8	80000
11	Բարձր ճնշման մանոմետրի փոխարինում		հատ	8	80000
12	Ֆիլտր-չորացուցիչի փոխարինում		հատ	8	144000
13	Ցածր ճնշման մանոմետրի փոխարինում	Օդորակիչի մոդելը՝ SVE30M Կոմպրեսորին միացված պղնձյա խողովակի տրամագիծը՝ Ներծծման գիծ- 15,9մմ (5/8''); Մղման գիծ- 9,5մմ (3/8'')	հատ	1	10000
14	Բարձր ճնշման մանոմետրի փոխարինում		հատ	1	10000
15	Վիբրամարիչի փոխարինում (вибромасителъ) 1''	Օդորակիչի մոդելը՝ SVE 100R Կոմպրեսորին միացված պղնձյա խողովակի տրամագիծը՝ Ներծծման գիծ- 25,4մմ (1''); Մղման գիծ- 15,9մմ (5/8'')	հատ	2	30000
16	Վիբրամարիչի (вибромасителъ) 5/8'' փոխարինում		հատ	1	10000
17	Օ-ձև խամուտ հենարանով 5/8'' փոխարինում		հատ	1	1000
18	Ցածր ճնշման մանոմետրի փոխարինում		հատ	2	20000
19	Բարձր ճնշման մանոմետրի փոխարինում		հատ	2	20000
20	Ֆիլտր-չորացուցիչի փոխարինում		հատ	2	36000
21	Վիբրամարիչի փոխարինում (вибромасителъ) 7/8''	Օդորակիչի մոդելը՝ SVR 80R Կոմպրեսորին միացված պղնձյա խողովակի տրամագիծը՝ Ներծծման գիծ- 22,2մմ (7/8''); Մղման գիծ- 15,9մմ (5/8'')	հատ	1	10000
22	Վիբրամարիչի (вибромасителъ) 5/8'' փոխարինում		հատ	1	10000
23	Օ-ձև խամուտ հենարանով 5/8'' փոխարինում		հատ	1	15000
24	Ցածր ճնշման մանոմետրի փոխարինում		հատ	1	10000
25	Բարձր ճնշման մանոմետրի փոխարինում		հատ	1	10000
26	Ֆիլտր-չորացուցիչի փոխարինում		հատ	1	18000
27	Ցածր ճնշման մանոմետրի փոխարինում	Օդորակիչի մոդելը՝ SVE50M Կոմպրեսորին միացված պղնձյա խողովակի տրամագիծը՝ Ներծծման գիծ- 19,1մմ (3/4''); Մղման գիծ- 12,7մմ (1/2'')	հատ	2	20000
28	Բարձր ճնշման մանոմետրի փոխարինում		հատ	2	20000
29	Վիբրամարիչի փոխարինում (вибромасителъ) 7/8''	Օդորակիչի մոդելը՝ SVR 80R Կոմպրեսորին միացված պղնձյա խողովակի տրամագիծը՝ Ներծծման	հատ	1	10000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՏՄԱՆԱԿԱՆ ԿՐԹԱՆՈՒՅՑՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

30	Վիբրամարիչի (вибросаситель) 5/8'' փոխարինում	գիծ- 22,2մմ (7/8''); Մղման գիծ- 15,9մմ (5/8'')	հատ	1	10000
31	Օ-ձև խամուտ հենարանով 5/8'' փոխարինում		հատ	1	1000
32	Ցածր ճնշման մանոմետրի փոխարինում		հատ	1	10000
33	Բարձր ճնշման մանոմետրի փոխարինում		հատ	1	10000
34	Ֆիլտր-չորացուցիչի փոխարինում		հատ	1	18000
Ընդամենը					8896950

Տեխնիկական պահանջներ


1. «TEMPSTAR ICP» արտադրող ընկերության կոնդիցիոներների տեխնիկական սպասարկումը պետք է կատարվի միայն էներգաբլոկի կանգառի ժամանակ; առնվազն 3 տարվա փորձ նմանատիպ աշխատանքների
2. Միևնույն սրահում գտնվող օդի կոնդիցիոներների տեխնիկական սպասարկումը հնարավոր չէ կատարել միառժամանակ՝ արտադրական անհրաժեշտություններից ելնելով:
3. «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թ1 էներաբլոկի ներքոնշված օդորակիչների նորոգումները պետք է կատարվեն հրատապ 24 ժամվա ընթացքում՝
Մոդել KB-AHN276, SWE 100R, SVU 150R, SVE 30P, SVE 50M, SVE 100R, SVR 80R, SVE 20P
արտադրող-Kiturami Bumyang Air Conditioning Co.LTD Կորեա
Մոդել PAS120L, PAF048 արտադրող- TEMPSTAR ICP, ԱՄՆ
Մոդել C12L4U, W05LC արտադրող- LG

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ
Հասցեն՝ ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ., N3
h/h 2473600002170010
«Արդշինբանկ» ՓԲԸ-ի Շենգավիթ մ/6
ՀՎՀՀ 02205028
Գլխավոր տնօրեն՝ Ս. Խաչատրյան



/ստորագրություն/ Վ.Տ.



ԿԱՏԱՐՈՂ

«ԱԶ Մ. Աղազարյան»
Հասցեն՝ Արարատի մարզ,
գ. Սուրենավան, Արցախի 15 տուն
h/h 205282206973
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 84487224
Մ. Աղազարյան



/ստորագրություն/ Վ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության			«« դրամ
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018-19թ.թ՝ ըստ ամիսների,
1	71311380	օդորակիչների վրա կատարվող նորոգման, տեխնիկական սպասարկման ծառայություններ	Հանձնման ընդունման արձանագրությունների երկկողմ հաստատման օրվանից 30 աշխատանքային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ
 Հասցեն՝ ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ., N3
 հ/հ 2473600002170010
 «Արդշինբանկ» ՓԲԸ-ի Շենգավիթ մ/ճ
 ՀՎՀՀ 02205028
 Գլխավոր տնօրեն՝ Ս. Խաչատրյան




/ստորագրություն/Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՁ Մ. Աղազարյան»
 Հասցեն՝ Արարատի մարզ,
 գ. Սուրենավան, Արցախի 15 տուն
 հ/հ 205282206973
 «Ինտելոբանկ» ՓԲԸ
 ՀՎՀՀ 84487224
 Մ. Աղազարյան

/ստորագրություն/Կ.Տ



Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « ____ » « _____ » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամկացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		


Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____ ստորագրություն
 _____ ազգանուն, անուն
 Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____ ստորագրություն
 _____ ազգանուն, անուն
 Կ.Տ.



ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

